

ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԻ ԷՌԹՅԱՆ ՇՈՒՋ

Գևորգ Վիրաբյան

*ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության
ամբիոնի ասիստենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու*

Իրավունքում առանց տրամաբանական մտածողության ձևերի (խոսքը դատողության և մտահագման մասին է) ընկալման¹ դժվար թե հնարավոր լինի խորհել իրավական կանխավարկածի էության մասին, այն մասին, թե կանխավարկածը՝ որպես իրավական երևույթ, ինչ է իրենից ներկայացնում: Միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ միայն տրամաբանական մտածողության նշված ձևերն ի գորու չեն բացահայտելու իրավական կանխավարկածի էությունը: Ի՞նչ է սա նշանակում:

Խոսելով կանխավարկածի՝ որպես իմացաբանական միջոցի մասին՝ հետազոտողների ճնշող մեծամասնությունը հանգել է այն մտքին, որ փիլիսոփայական-տրամաբանական առումով կանխավարկածը փաստի առկայության կամ բացակայության մասին ենթադրություն կամ հավանական ենթադրություն կամ հավանական դատողություն/մտահանգում է²: Պատկերը նույնն է նաև իրավագիտական հանրություն: Տարբերությունն այն է, որ իրավաբանական դոկտրինում իրավական կանխավարկածների վերաբերյալ ձևավորված փիլիսոփայական և իրավաբանական մոտեցման կողմնակիցները կանխավարկածի շուրջ ավելացնում են որոշ իրավական եզրույթներ և եզրահանգում, որ կանխավարկածը որոշակի իրավաբանական փաստերի առկայության դեպքում որոնվող իրավաբանական փաստի առկայության կամ բացակայության մասին իրավական նորմում ուղղակի կամ անուղղակի ամրագրված ենթադրություն է³, ապացուցողական ենթադրություն է⁴, օրինական ենթադրություն է⁵, իրավական

¹ Իրավական կարգավորման շրջանակներում տրամաբանական մտածողության ձևերի առանձնահատկությունների մասին տե՛ս, օրինակ, **Бабаев В.К.**, Советское право как логическая система. Учебное пособие. М.: Изд. Академия МВД СССР, 1978, էջ 105-117:

² Տե՛ս, օրինակ, **Сериков Ю.А.**, Презумпции в гражданском судопроизводстве. М.: Изд. Волтерс Клувер, 2008, էջ 5:

³ Տե՛ս, օրինակ, **Штейнберг А.**, Предположения как доказательства в гражданском процессе // Сов. Юстиция. 1940, № 13, էջ 11, **Бабаев В.К.**, Теория современного советского права. Фрагменты лекций и схемы. Н. Новгород: Изд. Инжегор. ВШ РСФСР, 1991, էջ 91, **Каранина Н.С.**, Правовые презумпции в теории права и российском законодательстве: дисс. канд. юрид. наук. Москва, 2006, էջ 11, **Качур Н.Ф.**, Презумпции в советском семейном праве: дисс. канд. юрид. наук. Свердловск, 1982, էջ 6, **Булаевский Б.А.**, Презумпции как средства правовой охраны интересов участников гражданских правоотношений: монография. М.: Изд. Инфра-М, 2014, էջ 26:

⁴ Տե՛ս, օրինակ, **Клейнман А.Ф.**, Советский гражданский процесс. М.: Изд. Моск. ун-та, 1954, էջ 186:

⁵ Տե՛ս, օրինակ, **Мейер Д.И.**, О юридических вымыслах и предположениях, о скрытых и притворных действиях. Избранные произведения по гражданскому праву. М.: Изд. АО Центр ЮрИнфоР, 2003, էջ 108-121, **Васьковский Е.В.**, Учебник гражданского процесса. Под ред. В.А. Томсинова. М.: Изд. Зерцало, 2003, էջ 241:

ենթադրություն է¹, իրավաբանական ենթադրություն է² և այսպես շարունակ³:

Այս դատողությունները գուցե ձևական տրամաբանության տեսանկյունից իմաստազուրկ չեն: Սակայն մեթոդաբանական առումով իրավաբանական և փիլիսոփայական մոտեցման կողմնակիցները չեն պատասխանում այն հարցին, թե ինչպես կարող ենք կանխավարկածը դիտարկել որպես ենթադրություն: Ավելին՝ նույնացման հետևանքը լինում է այն, որ կանխավարկածի էությունը շարունակում է մնալ չբացահայտված, և որպես դրա ձևավորման մեթոդ՝ նշվում է ոչ լրիվ ինդուկցիան, իսկ որպես «ենթադրությանը» համարժեք՝ այն հաճախ ներկայացվում է իբրև հավանական դատողություն/մտահանգում⁴:

Սկզբնական շրջանում վերը նշված հարցադրմանը մենք ևս տեղ չէինք հատկացնում՝ «համոզված լինելով», որ կանխավարկածը ենթադրություն է⁵: Սակայն հետագա հետազոտական աշխատանքներն արմատապես փոխեցին կանխավարկածի վերաբերյալ մեր իմացաբանական պատկերացումները: Մասնավորապես, գիտական որոնումների ճանապարհին կանխավարկածը դիտարկելով նախ որպես փիլիսոփայական կատեգորիա՝ հանգեցինք այն եզրակացության, որ վերջինս կանխադրույթ հանդիսացող փիլիսոփայական-իմացաբանական միջոց է, որը թույլ է տալիս տեսնելու և մտածելու առարկաների ու նրանց միջև առկա օրինաչափությունների գոյության կամ բացակայության մասին այնքան ժամանակ, քանի դեռ այն չի հերքվել⁶: Եվ ահա այս տեսանկյունից էր այն հարցն առաջանում, որ եթե կանխավարկածը փիլիսոփայական առումով կանխադրույթ հանդիսացող իմացաբանական միջոց է, ապա ինչպե՞ս կարող է նորմատիվային մակարդակում ձևական-տրամաբանական առումով վերածվել փաստի առկայության կամ բացակայության մասին ենթադրության կամ հավանական դատողության/մտահանգման, և դա այն դեպքում, երբ ձևական տրամաբանությունը թույլ է տալիս ճանաչելու ոչ թե երևույթի էությունը, այլ ընդամենը հասկանալու մտքի կանոնավորությունը, կամ՝ ինչպե՞ս կարող ենք նրա ձևավորման մեթոդը դիտարկել ոչ լրիվ ինդուկցիան: Ասվածի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար առաջարկում ենք նախ՝ այն քննարկել մի քանի օրինակների հիման վրա:

Առաջին՝ ՀՀ Սահմանադրության⁷ 1-ին հոդվածով ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունն իրավական պետություն է: ՀՀ քաղաքացիական

¹ Տե՛ս, օրինակ, **Мохов А.А.**, Теория и практика использования медицинских знаний в гражданском судопроизводстве России. СПб.: Изд. Юридический центр Пресс, 2003, էջ 243:

² Տե՛ս, օրինակ, **Воложанин В.П.**, Юридические предположения в советском гражданском праве и процессе: автореф. дисс. канд. юрид. наук. Свердловск, 1953, էջ 15, **Тарбагаева Е.Б.**, Юридические предположения в гражданском процессе: исковое производство: автореф. дисс. канд. юрид. наук. Ленинград, 1983, էջ 14:

³ Տե՛ս, օրինակ, **Հովհաննիսյան Գ.** Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն: Եր.: «Հանրային դիվանագիտություն» բարեգործական ՀԿ, 2020, էջ 199:

⁴ Տե՛ս օրինակ, **Пронина М.П.**, Презумпции в современном российском праве: дисс. канд. юрид. наук. Нижний Новгород, 2010, էջ 7:

⁵ Տե՛ս **Վիրաթյան Գ.Մ.**, Պրեզումպցիաների ուսումնասիրության մեթոդաբանական հիմնախնդիրները // ԵՊՀ իրավ. ֆակուլ.: Ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու: Գլխ. խմբ. Գ.Ս. Ղազինյան: Եր.: ԵՊՀ իրատ., 2019, 2(2) 2018, էջ 30-32:

⁶ Տե՛ս **Վիրաթյան Գ.Մ.**, Կանխավարկածը որպես փիլիսոփայական-իմացաբանական միջոց // Պետություն և իրավունք, № 1 (89), 2021, էջ 57:

⁷ Ընդունվել է 06.12.2015թ.: Ուժի մեջ է մտնել 22.12.2015թ.: ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում, Հոդ. 1118:

դատավարության օրենսգրքի¹ 7-րդ հոդվածով էլ նախատեսվում է, որ դատական ակտն օրինական է, եթե այն կայացվել է Սահմանադրության, սահմանադրական օրենքների, Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի, այլ օրենքների և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ, որոնց նորմերը կիրառելի են տվյալ գործը քննելիս և լուծելիս: Ինչպես առաջինը, այնպես էլ երկրորդը ելակետային դրույթներ են: Վերջիններիս հիման վրա գործում է դատական ակտի օրինական լինելու կանխավարկածը, քանի դեռ այն չի հերքվել: Հետևաբար, հարց է առաջանում՝ ինչպե՞ս բացատրել, որ մենք հավանական ենթադրություն (դատողություն) ենք կատարում դատական ակտի օրինական լինելու մասին, կամ ինչպե՞ս բացատրել, որ այս կանխավարկածը ձևավորվել է ոչ լրիվ ինդուկցիոն մեթոդով: Եթե փորձենք հիմնավորել այս մոտեցումը, ապա կստացվի, որ կասկածանքով ենք մոտենում ինչպես դատական ակտի օրինականությանը, այնպես էլ Հայաստանի Հանրապետության իրավական պետություն լինելուն՝ խեղաթյուրելով որդեգրած իրավական համակարգի էությունը (մոդելը):

Երկրորդ՝ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է, որ Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի² 17-րդ հոդվածի 1-ին մասով էլ սահմանվում է, որ հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Քրեադատավարագետներին հայտնի է, թե ինչ ասել է ինկվիզիցիոն դատավարությունից անցումը դեպի անմեղության կանխավարկածի հայեցակարգի վրա հիմնված դատավարության: Ավելին՝ իրավաբանական միտքն այսօր անմեղության կանխավարկածը նույնիսկ դիտարկում է որպես իրավական սկզբունք³, որի ներկայիս տեսքով գոյությունը վառ ապացույցն է այն ամենի, որ դրա հիմքում ընկած է գաղափարաբանություն, այն է՝ մարդը բարձրագույն արժեք է: Հետևաբար, դժվար է բերել հիմնավորումներ, որ ներկայիս տեսքով անմեղության կանխավարկածը ձևավորվել է ոչ լրիվ ինդուկցիոն մեթոդով, կամ այն ենթադրություն (հավանական դատողություն) է:

Երրորդ՝ վերցնենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի⁴ 437-րդ հոդվածը, որը նվիրված է պայմանագրի ազատության սկզբունքին: Սույն հոդվածում տեղ են գտել պայմանագրային հարաբերություններում ազատության սկզբունքի դրսևորման ձևերը⁵: Ազատ շուկայական հարաբերությունների պարագայում, կարծես, դժվար կլինի գտնել ժամանակակից քաղաքացիագետի, որը համակարծիք չլինի այն մտքի հետ, որ ազատության սկզբունքի *դրսևորումներն* ունեն

¹ Ընդունվել է 09.02.2018թ.: Ուժի մեջ է մտել 09.04.2018թ.: ՀՕ-110-Ն, ՀՀՊՏ 2018.03.05/16(1374), Հոդ. 208:

² Ընդունվել է 30.06.2021թ.: Ուժի մեջ է մտել 01.07.2022թ.: ՀՕ-306-Ն, Միասնական կայք 2021.07.26-2021.08.08:

³ Տե՛ս, օրինակ, Սարգոս իրավունքների եվրոպական դատարանի Բարբերան, Մետեգեն և Ջաբարդոն ընդդեմ Իսպանիայի գործով 1988թ. դեկտեմբերի 6-ի վճիռը:

⁴ Ընդունվել է 05.05.1998թ.: Ուժի մեջ է մտել 01.01.1999թ.: ՀՕ-239, ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

⁵ Պայմանագրի ազատության սկզբունքի մասին տե՛ս, օրինակ, Российское гражданское право. Учебник: В 2 т. Т. II: Обязательственное право / Отв. ред. Е.А. Суханов. 2-е изд., стереотип. М.: Изд. Статут, 2011, էջ 137-140, Гражданское право. Учебник. В 2 т. / Под ред. Б.М. Гонгало. Т. 2. 2-е изд., перераб. и доп. М.: Изд. Статут, 2017, 155-156, **Բարսեղյան Տ.Վ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք / Եր., պետ. համալս., չորրորդ հրատ., Եր.: Տիգրան Մեծ հրատ. 2014, առաջին մաս, էջ 436-437:

հերքվող կանխավարկածների կարգավիճակ¹: Այլ կերպ ասած՝ գործում են պայմանագիր կնքելու ազատության, ինչպես օրենքով նախատեսված, այնպես էլ չնախատեսված պայմանագիր կնքելու ազատության, խառը պայմանագիր կնքելու ազատության, պայմանագրի պայմանները որոշելու ազատության կանխավարկածները, քանի դեռ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում չեն հերքվում:

Արդյունքում կրկին այն հարցադրումներն են առաջ գալիս, որ եթե վերը նշված կանխավարկածները բխում են քաղաքացիաիրավական սկզբունքից, ապա ինչպե՞ս ենք պնդում, որ այդ կանխավարկածները՝ որպես իրավական սկզբունքի կենսագործումն ապահովող միջոցներ, ընդամենը հավանական ենթադրություններ/դատողություններ են, կամ՝ ինչպե՞ս ենք պնդում, որ այդ կանխավարկածները ձևավորվել են ոչ լրիվ ինդուկցիոն մեթոդով: Ավելին՝ ենթադրության կամ ոչ լրիվ ինդուկցիոն մեթոդի տեսանկյունից ինչպե՞ս պետք է բացատրել այն իրողությունը, որ որոշ տեսաբաններ օրենքի իմացության կանխավարկածը դիտարկում են որպես բացարձակ ճշմարտություն², մյուսները՝ անհասանելի իրավական գաղափար³, երրորդները՝ գործոն, որով պայմանավորված է իրավունքի առաջացումը⁴: Այլ կերպ ասած՝ եթե շարունակենք առաջ շարժվել ավանդական մոտեցումներից որևէ մեկով, ապա կանխավարկածի էությունը շարունակվելու է մնալ չբացահայտված:

Այդ դեպքում ի՞նչ անել: Առաջարկում ենք ի վերջո հրաժարվել իրավական կանխավարկածը որպես ենթադրություն (դատողություն/մտահանգում), իսկ ձևավորման մեթոդը՝ ոչ լրիվ ինդուկցիան դիտարկելուց և իրավական կանխավարկածի էությունը դիտարկել իրավունքի գործիքակազմային տեսության շրջանակներում: Մասնավորապես, եթե առաջնորդվենք այն գաղափարով, որ կանխավարկածը փիլիսոփայական առումով կանխադրույթ հանդիսացող իմացաբանական միջոց է, որը դրսևորվում է մտածողության տեսքով, իսկ իրավագիտության շրջանակներում իրավական կանխավարկածների շուրջ առկա խնդիրների լուծման մեթոդաբանությունն իրավունքի գործիքակազմային տեսությունն է, ապա հնարավորություն կստանանք իրավական կանխավարկածը դիտարկելու որպես օժանդակ իրավական միջոց⁵ և այդ տեսանկյունից քննարկելու նրա էությունն իրավունքում: Իսկ թե ինչու՞ ենք առաջարկում իրավական կանխավարկածը դիտարկել որպես իրավական միջոց, փորձենք այս թեզը հիմնավորել իրավական կանխավարկածների դրսևորումների լույսի ներքո: Այս խնդրից ելնելով՝ բերենք երկու օրինակ:

«Քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 5-րդ մասով օրենսդիրը սահմանել է, որ այն դեպքերում, երբ պայմանագրի պայմանը նախատեսված է նորմով, որը կիրառվում է, եթե այլ բան սահմանված չէ կողմերի համաձայնությամբ (դիսպոզիտիվ նորմ), կողմերը կարող են իրենց համաձայնությամբ բացառել այդ նորմի կիրառումը կամ սահմանել դրանում նախատեսվածից այլ պայման: «Քաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածի 1-ին մասով նախատես-

¹ Տե՛ս, օրինակ, Договорное и обязательственное право (общая часть): постатейный комментарий к статьям 307-453 Гражданского кодекса Российской Федерации / Отв. ред. А.Г. Карапетов. М.: Изд. М-Логос, 2017, էջ 820:

² Տե՛ս **Вавилова А.А.**, Презумпция законов // Вестник Московского университета. Сер. 11: Право, 2006, № 1, էջ 86:

³ Տե՛ս **Иванова А.А., Иванова В.П.**, Теория государства и права: М.: Изд. ЮНИТИ-ДАНА, 2007, էջ 123:

⁴ Տե՛ս **Табарин И.В.**, Современная теория права. М.: Изд. Феникс, 2008, էջ 295-302:

⁵ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս **Пугинский Б.И.**, Гражданско-правовые средства в хозяйственных отношениях. М.: Изд. Юрид. Лит., 1984, էջ 91, 155-158:

ված է, որ պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կատարելուց՝ կատարողի փաստացի կատարած ծախսերը վճարելու պայմանով: Սույն իրավադրույթում կարծես բացակայում է «եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով» արտահայտությունը: Հետևաբար՝ հարց է առաջանում՝ կողմերն իրավունք ունե՞ն պայմանագրով նախատեսել այլ կարգավորում, քան ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածի 1-ին մասում տեղ գտած օրենսդրական կարգավորումն է: Եթե հակիրճ արտահայտվենք, ապա հիմք ընդունելով պայմանագրի ազատության սկզբունքի բովանդակության հիմքում ընկած գաղափարաբանությունը՝ կարող ենք արձանագրել, որ եթե իրավանորմի բնույթից այլ բան չի բխում, ապա նորմը պետք է մեկնաբանել որպես դիսպոզիտիվ: Այլ խոսքով՝ գործում է իրավանորմի դիսպոզիտիվության կանխավարկածը, կամ որ նույնն է՝ պայմանագրային հարաբերությունների կարգավորման մեկնարկը տալիս ենք՝ էլնելով նորմի դիսպոզիտիվության կանխավարկածից, քանի դեռ այն չի հերքվել¹:

Երկրորդ՝ գործատուն, հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածը, խախտման վերաբերյալ գրավոր բացատրագիր է պահանջում: Աշխատողը բացատրագիր չի ներկայացնում: Գործատուն կիրառում է «նկատողություն» կարգապահական տույժը՝ որպես պատասխանատվության միջոց: Աշխատողը դատական կարգով վիճարկում է հրամանի իրավաչափությունը: Գործատուն ներկայացնում է խախտման փաստը հավաստող ապացույցներ: Դատարանը բարձրացնում է կիրառված «նկատողություն» կարգապահական տույժի համաչափության հարցը: Իրավաբանական երևութաբանության² տեսանկյունից հարց է առաջ գալիս. աշխատողի կողմից բացատրություն չներկայացնելու փաստն արդյո՞ք ենթակա է արժևորման կարգապահական տույժի համաչափության հարցը քննարկելիս: Ամենևին էլ խնդիր չունենալով խորամուխ լինելու աշխատանքային իրավունքի առանձնահատկությունների մեջ՝ այնուամենայնիվ կարող ենք արձանագրել, որ, օրինակ, աշխատողի կողմից բացատրագիր չներկայացնելու դեպքում կարող է գործել գործատուի կողմից ընտրված «նկատողություն» կարգապահական տույժի համաչափության կանխավարկածը, քանի դեռ այն չի հերքվել:

Այս երկու օրինակները, ինչպես որ նախորդները, թույլ են տալիս պատկերացում կազմել այն հարցի շուրջ, որ իրավական կանխավարկածը վրա է հասնում այնտեղ և այն ժամանակ, երբ անհրաժեշտ է որոշում կայացնել, վարքագիծ դրսևորել, սուբյեկտիվ իրավունքները կենսագործել կամ պարտականությունները կատարել և այլն: Այլ կերպ ասած՝ իրավական կանխավարկածը՝ որպես օժանդակ իրավական միջոց, հնարավորություն է տալիս ճանաչելու և ստեղծելու իրավական իրականության մոդել և կանխավ մտածելու իրականության այս կամ այն կերպ լինելու մասին, քանի դեռ այդ կերպ մտածելու օրինաչափությունը չի հերքվում: Մասնավորապես, վերոգրյալում իրավական կանխավարկածը մի դեպքում թույլ տվեց մտածելու իրավանորմի դիսպոզիտիվ լինելու մասին, մեկ այլ դեպքում էլ՝ իրավունքի տեսանկյունից արժևորելու աշ-

¹ Տե՛ս, օրինակ, Договорное право (общая часть): постатейный комментарий к статьям 420-453 Гражданского кодекса Российской Федерации / Отв. ред. А.Г. Карапетов. М.: Изд. М-Логос, 2020, էջ 125:

² Իրավաբանական երևութաբանության մասին տե՛ս, օրինակ, Пантыкина М.И., Феноменологическая методология: опыт исследования права. Екатеринбург: Изд. Урал. ун-та, 2008, 242 էջ, Малахов В.П., Методологические и мировоззренческие проблемы современной юридической теории: монография. М.: Изд. ЮНИТИ-ДАНА, 2012, էջ 48-54:

խատողի կողմից սուբյեկտիվ իրավունքի չիրացված լինելու փաստը: Բնակա-նաբար հարց է առաջանում՝ ինչպե՞ս կամ ինչի՞ց ելնելով ենք այդպես մտա-ծում: Այստեղից առաջ է գալիս նաև հաջորդ հարցը՝ «ենթադրություն» և «դա-տողություն/մտահանգում» կատեգորիաներից հրաժարվելու դեպքում ինչպե՞ս ենք որոշում նորմի դիսպոզիտիվության կանխավարկածի ճշմարտացիությու-նը: Եթե բարձրացված հարցադրումները դիտարկում ենք իրավունքի գործիքա-կազմային տեսության շրջանակներում, իսկ իրավական կանխավարկածը հա-մարում որպես օժանդակ իրավական միջոց¹, ապա ստանում ենք հետևյալ պատկերը:

Իրավունքի գործիքակազմային տեսությունը ճշմարտության չափանիշ է համարում այն ամենը, ինչն օգտակար և պիտանի է հասարակությանը: Այ-սինքն՝ իրավական մտածողության արժևորումը կախվածության մեջ է դրվում ընտրված միջոցի նշված հատկանիշներից: Այս գաղափարով շարժվելու դեպ-քում կանխավարկածը հնարավորություն է տալիս կառուցելու դատողություն-ներ կամ մտահանգումներ, որի պարագայում կարևորը ոչ թե բացարձակ ճշմարտությունն է, այլ նպատակի հիմքում ընկած համոզմունքները: Երբ ինչ-որ բանի նկատմամբ ունենում ենք ամուր և անքակտելի համոզմունք, ապա այլևս չենք հետաքրքրվում՝ այն ճշմարիտ է, թե՛ ոչ: Այսինքն, եթե չլինի իրավական կանխավարկածը՝ որպես միջոց, չի լինի նաև դատողությունը կամ մտահանգու-մը: Օրինակ, եթե ասում ենք, որ քաղաքացիաիրավական հարաբերություններում սուբյեկտների բարեխղճությունը ենթադրվում է, ըստ էության ելնում ենք այն համոզմունքներից, որոնք ընկած են քաղաքացիաիրավական սկզբունքնե-րի հիմքում², և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավունքում մտածում ենք (դատողություն ենք կատարում) սուբյեկտների բարեխղճ լինելու մասին:

Վերցնենք համոզմունքի դրսևորման մեկ այլ օրինակ: Խոսքն իրավունքի անալոգիայի մասին է, որը, ելնելով ընդհանուր սկզբունքներից և իրավունքի ի-մաստից, կիրառվում է օրենսդրությամբ (պոզիտիվ իրավունքի շրջանակնե-րում) չկարգավորված հարաբերությունների նկատմամբ³: Ստացվում է, որ ի-րավունքի անալոգիա կիրառելու հիմքն իրավական սկզբունքներն են՝ որպես ի-րավական համակարգի շարժիչ ուժ, որոնք կանխորոշում են պետության և ի-րավունքի զարգացման ուղղությունները, չկարգավորված հարաբերությանը հաղորդում են իրավական իմաստ և բովանդակություն⁴: Առաջին հայացքից տպավորություն է ստեղծվում, որ հասարակական հարաբերության կանոնա-կարգման համար կիրառվող միջոցն անալոգիան է՝ որպես տրամաբանական հնարք: Սակայն միայն առաջին հայացքից: Երբ խնդրին մոտենում ենք գործի-քակազմային առումով, ստացվում է՝ իրականում յուրաքանչյուր կոնկրետ դեպ-քում, երբ իրավունքի անալոգիա կիրառելը թույլատրված է, մենք ելնում ենք ի-րավական այն կանխավարկածից, որ իրավունքի սկզբունքներն ի վիճակի են կարգավորելու պոզիտիվ իրավունքով չկարգավորված հարաբերությունները:

¹ Իրավական միջոցների մասին ավելի մանրամասն տե՛ս, օրինակ, **Васильева Н.В.**, Юридические и неюридические средства в системе правового регулирования: дисс. канд. юрид. наук. Омск, 2014, 204 էջ:

² Տե՛ս, օրինակ, **Гражданское право: учебник. В 4 т. Т. I. Общая часть.** Отв. ред. Е.А. Суханов. 2-е изд., перераб. и доп. М.: Изд. Статут, 2019, էջ 469:

³ Տե՛ս, օրինակ, **Нерсисянц В.С.**, Общая теория права и государства: учебник. М.: Изд. Норма, 2012, էջ 494, **Хачатуров Р.Л.**, Аналогия в праве // Вектор науки ТГУ. 2009, № 5(8), էջ 129:

⁴ Տե՛ս, օրինակ, **Ведяхин В.М.**, Принципы правового регулирования рыночных отношений // Правоведение. 1995, № 4-5, էջ 27:

Այլ կերպ ասած՝ ինչպես որ դատողության կամ մտահանգման, այնպես էլ այս դեպքում կանխավարկածի (միջոցի) առկայությունն է մեզ հնարավորություն տալիս կիրառելու անալոգիան՝ որպես տրամաբանական հնարք:

Այսինքն, եթե առաջին օրինակի, այն է՝ բարեխղճության կանխավարկածի միջոցով մտածում ենք պոզիտիվ իրավունքի շրջանակներում և կատարում դատողություն, ապա երկրորդի՝ պոզիտիվ իրավունքով չկարգավորված հարաբերությունն իրավական սկզբունքով կարգավորելու իրավական կանխավարկածի միջոցով մտածում ենք իրավունքի մասին¹: Եթե ավելի պարզ, ապա առաջինը հանդես է գալիս որպես իրավունքում ճանաչողության միջոց, իսկ երկրորդը՝ որպես իրավունքը ճանաչելու միջոց: Իհարկե երկու դեպքում էլ կատարում ենք դատողություններ: Սակայն այդ դատողությունները կատարում ենք՝ ելնելով ինչ-որ համոզմունքներից: Այս կերպ մոտեցման էությունն այն է, որ հնարավոր չէ մտածել իրավունքում կամ իրավունքի մասին, եթե չունենք այդ համոզմունքներն արտահայտող և կենսագործող իրավական միջոց, այն է՝ իրավական կանխավարկած:

Այսպիսով, սեղանը մաքրելով՝ կարող ենք արձանագրել, որ եթե իրավական կանխավարկածը դիտարկում ենք որպես օժանդակ իրավական միջոց, ապա այն մեզ հնարավորություն է տալիս պատասխանելու այն հարցին, թե ինչպե՞ս են միմյանց հետ հարաբերակցվում իրավական կանխավարկածը և տրամաբանական մտածողության ձևերը (մտահանգումը/դատողությունը), այնպես էլ այն հարցին, թե ինչպե՞ս կամ ինչի՞ց ելնելով ենք մտածում և ինչպե՞ս ենք որոշում այդ կերպ մտածելու ճշմարտացիությունը: Արդյունքում հնարավորություն ենք ստանում իրավական կանխավարկածի էությունը բացահայտել նորովի:

О СУЩНОСТИ ПРАВОВОЙ ПРЕЗУМПЦИИ

Геворг Вирабян

*Ассистент кафедры теории и истории
государства и права ЕГУ, кандидат юридических наук*

В рамках данной статьи автор обсудил некоторые методологические вопросы, касающиеся сущности правовой презумпции. В частности, был представлен круг этих вопросов, методологические подходы к ним, существующие в правовой доктрине. В виде примеров, были рассмотрены отдельные ситуации, в рамках которых обосновывалось, что существующие подходы в правовой доктрине не позволяют выявить сущность правовой презумпции.

Затем автор представил свое теоретико-методологическое видение по решению выделенных вопросов. В этом контексте он обсудил сущность правовой презумпции, ответил на вопрос, что представляет собой

¹ Իրավունքում մտածողության և իրավունքի մասին մտածողության ձևերի մասին ավելի մանրամասն տե՛ս **Օվչинников А.И.**, Правовое мышление: дисс. докт. юрид. наук. Ростов-на-Дону, 2004, 124-138, **Օվչинников А.И.**, Правовое мышление в герменевтической парадигме. Ростов-на-Дону: Изд. Рост. ун-та, 2002, էջ 155-177, **Օվչинников А.И.**, Правовое мышление: аксиологический и герменевтический аспекты: дисс. канд. юрид. наук. Ростов-на-Дону, 2000, էջ 119-136:

презумпция в правовом смысле, что она позволяет делать в рамках правового регулирования, как она соотносится с формами (суждением и умозаключением) логического мышления.

ON THE ESSENCE OF THE LEGAL PRESUMPTION

Gevorg Virabyan

*Lecturer of the YSU Chair of Theory and History of State and Law,
Candidate of Legal Sciences*

In the framework of this article, the author has discussed some methodological issues regarding the essence of the legal presumption. In particular, a range of these issues, methodological approaches to them that exist in the legal doctrine were presented. Certain situations have been considered in the form of examples, in the context of which it has been argued that the existing approaches in the legal doctrine do not allow to reveal the essence of the legal presumption.

Then the author presented his theoretical-methodological vision for solving the isolated issues. In this context, he discussed the essence of the legal presumption, answered the question what the presumption is in legal terms, what does it allow to do within the framework of legal regulation, how does it relate to the forms (reasoning/judgment) of logical thinking.

Բանալի բառեր – *իրավական կանխավարկած, փիլիսոփայական-հնացարանական միջոց, օժանդակ իրավական միջոց, ամեղության կանխավարկած, կանխադրույթ, հավանական դատողություն, իրավաբանական ենթադրություն, պայմանագրի ազատության սկզբունք, իրավունքի գործիքակազմային տեսություն, իրավունքի անալոգիա, իրավական սկզբունք, ոչ լրիվ ինդուկցիա*

Ключевые слова: Правовая презумпция, философско-гносеологическое средство, вспомогательное правовое средство, презумпция невиновности, вероятное суждение, юридическое предположение, принцип свободы договора, инструментальная теория права, аналогия права, правовой принцип, неполная индукция.

Key words: Legal presumption, philosophical-gnoseological measure, auxiliary legal measure, presumption of innocence, probable judgment, legal assumption, principle of freedom of contract, instrumental theory of law, analogy of law, legal principle, incomplete induction.